# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 15 հունվարի 2026թ-ին կնքված N «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/6-3» ծածկագրով՝ Պետության կարիքների համար տեսաֆիլմերի արտադրության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք.Երևան «    » 2026թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ար և Արտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Անդրեասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետը, ինչպես նաև «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/6-3» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2026 թվականի համար հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն Ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ հավելված 1-ի և Վճարման ժամանակացույցի՝ հավելված 2-ի:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «Ար և Արտ» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ | Ք.Երևան, Լենինգրադյան 20 շենք, բն.33 |
| Կառավարական տուն 1 | Ինեկոբանկ ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՀ 2050022475881001 |
| Հ/Հ 900011030948 | ՀՎՀՀ 01280472 |
| ՀՎՀՀ 02505554 | |
| Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475 Date: 2026.01.29 17:05:14 AMT | Digitally signed by ANDREASYAN ARMEN 2202820205 Date: 2026.01.29 14:05:45 AMT |
| -------------------------------- | -------------------------------- |
| / ստորագրություն / Կ.Տ | / ստորագրություն / Կ.Տ |

*Հավելված թիվ 1*
*«15» հունվարի 2026թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/6-3 ծածկագրով պայմանագրի*
*«        »                    2026թ. կնքված N 1 Համաձայնագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 3 | 92111100/502 | **3.Կինո և տեսաֆիլմերի արտադրության ծառայություններ՝ այդ թվում.**<br>**Վավերագրական ֆիլմի պատրաստում**<br>**Կատարողը պարտավոր է տրամադրել Պատվիրատուին առավելագույնը 2 վավերագրական ֆիլմ, որոնք** կպատրաստվեն մինչև տարեվերջ և կլուսաբանեն Պատվիրատուի գրասենյակի աշխատանքները (ֆիլմերի սցենարական պլանի մշակում, որը քայլ առ քայլ կներկայացնի նկարահանման ողջ կադրային ընթացը, տեսանկարահանման նախագիծ/տեսանկարահանում, ֆիլմի մոնտաժ, երաժշտական ձևավորում, լրագրողական/հետկադրային տեքստի պատրաստում և ձայնագրում, ենթագրեր): Վավերագրական ֆիլմերում պետք է օգտագործվեն Պատվիրատուի բրենդային տարրերը և առանձնահատկությունները: Յուրաքանչյուր վավերագրական ֆիլմի համար Կատարողը պարտավոր է տրամադրել նախնական սցենարի առնվազն 3 տարբերակ, ներառյալ նկարահանումների պլանավորման գրաֆիկը, վայրերը և տեխնիկական այլ մանրամասներ: Սցենարը պետք է ընդգրկի նաև նկարահանման նպատակները, ուղերձները, հիմնական բովանդակությունը, ինչպես նաև այն վիդեոնյութերը, որոնք կարող են հետագայում անհրաժեշտ լինել: Սցենարում առկա լրագրողական հարցերը պետք է ներկայացվեն այն լեզվով, որոնց դրանց պատասխանելու են նկարահանման հերոսները: Կատարողը սկսում է նկարահանումները Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր վավերագրական ֆիլմի սցենարի վերջնական տարբերակի հաստատումից հետո: Պատվիրատուն կարող է առավելագույնը 5 անգամ | դրամ | 2500000 | 1 | ք.Երևան, Վ.Սարգսյան 3 Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ | Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2026թ. դեկտեմբերի 25-ը |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փոփոխություններ իրականացնել յուրաքանչյուր վավերագրական ֆիլմի սցենարում ինչպես նկարահանումների ընթացքում, այնպես էլ մոնտաժի փուլում: Յուրաքանչյուր վավերագրական ֆիլմ պետք է տրամադրվի անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն և իսպաներեն ենթագրերով: Ֆիլմի անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն և իսպաներեն թարգմանությունները պարտավոր է իրականացնել Կատարողը: Պատվիրատուն կարող է պահանջել նաև հետկադրային ձայնով թարգմանություններ, որոնք ստուդիայում բարձր որակի ձայնագրմամբ պետք է ընթերցեն տվյալ լեզվի լեզվակիրները՝ ունենալով հետկադրայի ձայնագրման փորձ, համապատասխան ձայնային տվյալներ և հստակ առոգանություն: Ձայնի ընտրությունը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:<br>Թարգմանիչներից **պահանջվող որակավորումներ և հմտություններ**՝<br>• Հայերենի գերազանց իմացություն<br>• Անգլերենի, ռուսերենի, իսպաներենի և ֆրանսերենի գերազանց իմացություն (մայրենիին հավասար)<br>• Գիտական գործունեություն՝ գիտական աշխատանքներ միջազգային ամսագրերում:<br>• Առնվազն 10 միջազգային հավաքներում կամ համաժողովներում որպես թարգմանիչ աշխատանքային փորձ:<br>• Ըստ պահանջվող օտար լեզուների թարգմանչական ծառայության մատուցման առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ<br><br>Թարգմանված նյութերը ստանալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի Կատարողին ներկայացնել վերախմբագրման առավելագույնը 4 անգամ:<br>Յուրաքանչյուր վավերագրական ֆիլմի նկարահանման համար Կատարողը պարտավոր է ներգրավել առնվազն մեկ ռեժիսոր, առնվազն 3 օպերատոր, առնվազն 1 ձայնային օպերատոր, առնվազն 1 մոնտաժող, առնվազն 1 գրաֆիկական դիզայներ, առնվազն 1 անիմացիայի մասնագետ, առնվազն 1 սցենարի հեղինակ, առնվազն 1 լրագրող: Նկարահանումների ընթացքում առնվազն 1 ռեժիսորի, առնվազն 3 օպերատորի, առնվազն 1 ձայնային օպերատորի և առնվազն 1 լրագրողի ներկայությունը պարտադիր է:<br>Լրագրողից պահանջվող հմտությունները.<br>• Առնվազն 3 տարվա լրագրողական հեռուստատեսային աշխատանքային փորձ: Կից ներկայացնել իր մասնակցությամբ առնվազն 5 վավերագրական ֆիլմերի հղումներ: | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | • Լրագրողական բարձրագույն կրթություն: Կից ներկայացնել հավաստող փաստաթուղթը:<br>Ռեժիսորից պահանջվող հմտությունները.<br>• ռեժիսորի աշխատանքային փորձը առնվազն 10 տարի:<br>• առնվազն նմանատիպ 5 ֆիլմերի արտադրության փորձով:<br>Յուրաքանչյուր վավերագրական ֆիլմի տևողությունը՝ առնվազն 10 րոպե և առավելագույնը 20 րոպե: Լրագրողական տեքստը նախապես կհամաձայնեցվի Պատվիրատուի հետ: Կատարողը, ըստ Պատվիրատուի հետ ձեռք բերված համաձայնության, Պատվիրատուին կտրամադրի յուրաքանչյուր վավերագրական ֆիլմի համառոտ և ընդլայնված տարբերակները՝ ըստ սոցցանցերի պարամետրերի (reels ձևաչափ և այլն): Սոցցանցերի պարամետրերի պահպանման համար անհրաժեշտ տեխնիկական լուծումները պարտավոր է ապահովել Կատարողը:<br>Վավերագրական ֆիլմը պետք է համապատասխանի հետևյալ չափորոշիչներին՝<br>• Նկարահանումները 4k ֆորմատով, 25fps չափանիշներով<br>• բոլոր տեսարանների անցումներում՝ ձայնային «ինտերշումի» գործածություն<br>• տեսաֆիլմերում օգտագործվող երաժշտական մասերը՝ գնված և հեղինակային իրավունքի պահպանմամբ<br>• պատկեր՝ վայրկյանում 30 կադր<br>• ձայնային սարքավորումների, կցվող միկրոֆոնների ապահովում<br>• տեքստ՝ ձայնի և պատկերի հետ բովանդակային և պատկերավոր առավելագույն պարզ համադրում, ձայնային, անիմացիոն, գրաֆիկական և այլ լուծումներով:<br>• Օգտագործվող օբյեկտիվները՝ 10 mm, f 2.2 / 24mm T 1.5 , 24-105 mm f 4, 70-200 mm f 2.8, 35mm T 1.5 / 85 mm T 1.5 և այլն<br>• Ձայնագրման որակը՝ Sennheiser sound G4<br>• Լուսավորություն՝ 4 լեդային լույս (Led panel), 4 կետային լույս (Dedolight), 2 ընդհանուր լուսավորություն ապահովող սարք:<br>• Տեսահոլովակի պատրաստման գործում Կատարողը պարտավոր է ապահովել 3 տեսախցիկ, սահող տեսախցիկ (slider camera), օբյեկտիվներ, եռոտանիներ, կադրի՝ ձեռքի | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կայունացուցիչ (gimbal), ինչպես նաև հուշարար սարք։<br><br>Նկարահանման ընթացքում օգտագործվող բոլոր սարքավորումները պետք է արտադրված լինեն 2019 թվականից ի վեր:<br>Կատարողն իրավունք չունի օգտագործել այլ աղբյուրներից վերցված նյութեր՝ առանց Պատվիրատուի հետ համաձայնեցման:<br>Յուրաքանչյուր վավերագրական ֆիլմ պետք է ունենա համապատասխան տարբերանշան, տարբերակող վիզուալ և ձայնային ձևավորում (անիմացիոն շապիկ, բլում և այլն): Յուրաքանչյուր վավերագրական ֆիլմ պետք է ունենա գովազդային կարճ հոլովակ (առնվազն 20 վայրկյան և առավելագույնը 35 վայրկյան տևողությամբ անգլերեն և ռուսերեն տարբերակներով), ինչպես նաև յուրաքանչյուր վավերագրական ֆիլմի մեկնարկային պաստառ, որոնք ևս պետք է համաձայնեցվեն Պատվիրատուի հետ։ Պատվիրատուն կարող է պաստառում և գովազդային կարճ տարբերակներում փոփոխություններ առաջարկել առնվազն 5 անգամ:<br>**Կատարողը կիրականացնի դրոնով նկարահանումներ՝ իր կողմից ձեռքբերված դրոնով նկարահանման թույլտվությամբ, և դրոնը պետք է հեղինակային իրավունքը պաշտպանված լինի:** Անհրաժեշտության դեպքում Կատարողը պետք է նախատեսի մասսայական, խաղարկային (դերասանների մասնակցությամբ) և պավիլյոնային նկարահանումներ (ինքնուրույն կահավորելով տաղավարը և դրա վայրը նախապես համաձայնեցնելով Պատվիրատուի հետ)։ Մասսայական, խաղարկային (դերասանների մասնակցությամբ) նկարահանումների բոլոր մանրամասները և մասնակիցների տվյալները պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:<br>Նկարահանումների ընթացքում լրագրողի ներկայությունը պարտադիր է: Լրագրողը կիրականացնի անգլերեն և ռուսերեն լեզուներով հարցազրույցներ, եթե տեսանյութերի հերոսները չեն տիրապետում հայերենի։<br>Նկարահանման ընթացքում նախօրոք սահմանված ժամկետներում չտեղավորվելու դեպքում Կատարողը պարտավոր է ընդլայնել նկարահանող խումբը։ Անհրաժեշտության դեպքում Կատարողը պետք է ֆիլմերի շրջանակներում հնարավորություն ունենա առանձին նկարահանման խմբերով միաժամանակ նկարահանում կատարել նույն օրվա և նույն ժամերի ընթացքում տարբեր վայրերում: Այդ պարագայում կատարողը պարտավոր է | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ապահովել ևս 1 նկարահանման խումբ՝ ներգրավելով առնվազն 1 ռեժիսոր, առնվազն 3 օպերատոր, առնվազն 1 ձայնային օպերատոր, առնվազն 1 մոնտաժող, առնվազն 1 գրաֆիկական դիզայներ, առնվազն 1 անիմացիայի մասնագետ, առնվազն 1 սցենարի հեղինակ, առնվազն 1 լրագրող: Լրագրողը պետք է համապատասխանի վերոնշյալ չափանիշներին:<br>Ըստ Պատվիրատուի պահանջի՝ Կատարողը պետք է իրականացնի ֆիլմում նկարահանվող միջոցառումների ամբողջ ընթացքի տեսանկարահանումները, ինչպես նաև ֆոնային (բեքսթեյջ) պրոֆեսիոնալ լուսանկարհանումներ յուրաքանչյուր ֆիլմի համար առնվազն 5 լուսանկարահանման շարքով:<br>Կատարողը պարտավոր է տրամադրել վավերագրական ֆիլմի առաջին 2 (երկու) րոպեները մոնտաժված տարբերակով՝ Պատվիրատուին ներկայացնելով մոնտաժման ոճը և տրամաբանությունը, ներառյալ վիզուալ և ձայնային, գրաֆիկական ձևավորումները, վավերագրական ֆիլմի նկարահանումների ավարտից հետո 10 (տասը) օրվա ընթացքում: Կատարողը պարտավոր է տրամադրել վավերագրական ֆիլմի ամբողջական նախնական տարբերակը Պատվիրատուին, յուրաքանչյուր վավերագրական ֆիլմի նկարահանումների ավարտից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում, եթե Պատվիրատուն այլ ժամկետ չի սահմանել:<br>Պատվիրատուն իրավունք ունի մինչև ֆիլմերի վերջնական տարբերակների ընդունումն առավելագույնը 7 անգամ Կատարողին տրամադրել դիտարկումների և փոփոխությունների փաթեթներ և սահմանել դրանց կատարման վերջնաժամկետ:<br>Յուրաքանչյուր վավերագրական ֆիլմի նկարահանումները կարող են իրականացվել տարբեր վայրերում, ներառյալ ՀՀ մարզեր (տրանսպորտային և կեցության ծախսերը ներառված են արժեքի մեջ): Երևանից դուրս նկարահանումների պարագայում Կատարողը պարտավոր է ապահովել նկարահանման մասնակիցների տեղափոխությունը:<br>Այն պարագայում, եթե վավերագրական ֆիլմը ունենում է տեխնիկական խնդիրներ, Կատարողը պարտավոր է իր հաշվին իրականացնել համապատասխան շտկումներ կամ վերանկարահանումներ:<br>Պատվիրատուն, ըստ նպատակահարմարության, կարող է ներկա գտնվել ֆիլմերի / օրագրերի շարքի նկարահանումներին և մոնտաժային աշխատանքներին, տեղում առաջարկել փոփոխություններ: Այդ պարագայում | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Կատարողը պարտավոր է Պատվիրատուի համար ապահովել նկարահանման վայերի մուտքի թույլտվություն, մոնտաժային սենյակ և այլն։ Նախքան մոնտաժային աշխատանքները սկսելը՝ Կատարողը պետք է Պատվիրատուին ներկայացնի վերջնական համալրված սցենարը՝ վայրկյանական կադրային հերթականությամբ, հերոսների և լրագրողի խոսքերով, օգտագործված այլ նյութերի նկարագրությամբ և այլն։ Նախքան հաստատումը՝ Պատվիրատուն կարող է առաջարկել փոփոխություններ, որոնք կիրականացվեն Կատարողի կողմից։ Մոնտաժային աշխատանքներում Կատարողը պարտավոր է ուշադրություն դարձնել բոլոր տեխնիկական մանրամասներին՝ գունադրում, աղմուկի հետ աշխատանք, ենթագրերի ավելացում և փոփոխում և այլն։<br>Կատարողը կտրամադրի Պատվիրատուին վավերագրական ֆիլմի համար իրականացրած նկարահանումների չմոնտաժված ամբողջական նյութերը։ Այդ նյութերը պետք է Պատվիրատուին փոխանցվեն համակարգված ձևով՝ ըստ նկարահանման ամսաթվի, անվանման, բերված միևնույն ձևաչափի։<br>Կատարողը ինքնուրույն կկազմակերպի յուրաքանչյուր նկարահանման հետ կապված կազմակերպչական հարցերը՝ ձեռք բերել պայմանավորվածություններ վավերագրական ֆիլմի հերոսների, նկարահանումների վայրերի պատասխանա-տուների և այլն։ Նկարահանումները կարող են իրականացվել նաև ոչ աշխատանքային օրերին և ոչ աշխատանքային ժամերին։ Պատվիրատուն պարտավորվում է նախապես զգուշացնել Կատարողին նման նկարահանումների անհրաժեշտության մասին, չհաշված ֆորս-մաժորային իրավիճակները։ Կատարողը պարտավոր է իրեն հասանելի լծակներով ձեռք բերել վավերագրական ֆիլմերի համար անհրաժեշտ հավելյալ տեսանյութեր՝ հեղինակային իրավունքի ձեռքբերմամբ և Պատվիրատուի հետ համաձայնեցված։ Կատարողը պարտավոր է Պատվիրատուին տրամադրել առնվազն մեկ կոնտակտային անձ աշխատանքների իրականացման ընթացքում Պատվիրատուի կոնտակտային անձի հետ գրավոր և բանավոր հաղորդակցության համար։<br>Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ ըստ ֆիլմերի քանակի։ | | | | | | |

| | |
|---|---|
| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
| Վարչապետի աշխատակազմ | «Ար և Արտ» ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ | Ք.Երևան, Լենինգրադյան 20 շենք, բն.33 |
| Կառավարական տուն 1 | Ինեկոբանկ ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՀ 2050022475881001 |
| Հ/Հ 900011030948 | ՀՎՀՀ 01280472 |
| ՀՎՀՀ 02505554 | |
| ________________________________ | Digitally signed by ANDREASYAN ARMEN 2202820205 Date: 2026.01.29 14:06:14 AMT |
| / ստորագրություն / Կ.Տ | / ստորագրություն / Կ.Տ |

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2026.01.29 17:05:43 AMT

*Հավելված թիվ 2*
*«15» հունվարի 2026թ. կնքված*
*ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/6-3 ծածկագրով պայմանագրի*
*«       »                    2026թ. կնքված N 1 Համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 92111100/502 | Կինո և տեսաֆիլմերի արտադրության ծառայություններ | - | - | - | - | - | - | 1250000 | 1250000 | 1250000 | 2500000 | 2500000 | 2500000 | 2500000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011030948
ՀՎՀՀ 02505554

---------------------------------
/ ստորագրություն / Կ.Տ

Digitally signed by BOSHYAN GARIK
1404880475
Date: 2026.01.29 17:06:06 AMT

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ար և Արտ» ՍՊԸ
Ք.Երևան, Լենինգրադյան 20 շենք, բն.33
Ինեկոբանկ ՓԲԸ
ՀՀ 2050022475881001
ՀՎՀՀ 01280472

Digitally signed by ANDREASYAN ARMEN
2202820205
Date: 2026.01.29 14:06:27 AMT

---------------------------------
/ ստորագրություն / Կ.Տ